Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
ապրիլի 18-ի նիստի N 15
արձանագրային որոշման

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԾՐԱԳՐԵՐ) ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ

1. Հանրակրթական ծրագիր (ծրագրեր) իրականացնող ոչ պետական ուսումնական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրաբերելու նպատակը հանրակրթության ոլորտում նպատակային գործունեություն ծավալող կազմակերպություններին պետականորեն աջակցելու միջոցով մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը նպաստելն է:

2. Կազմակերպությանն անշարժ գույք նվիրաբերելու պայմանն է այդ գույքը միայն կրթական նպատակներով օգտագործելը՝ բացառելով հետագա օտարման, վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման հնարավորությունը:

3. Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը կազմակերպությանը նվիրաբերվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրաբերելու կարգին համապատասխան:

4. Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքն առաջնահերթ նվիրաբերվում է այն կազմակերպություններին, որոնց Հայաստանի Հանրապետության կառավարությունն արդեն իսկ անհատույց օգտագործման կամ վարձակալության իրավունքով՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կրթական գործունեության նպատակով օգտագործելու պայմանով, հատկացրել է համապատասխան անշարժ գույք:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որպես նվիրաբերություն անշարժ գույք ստանալու համար կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1) հանրակրթության ոլորտում ունենա առնվազն 10 տարվա գործունեություն,

2) շրջանավարտների միասնական ավարտական քննությունների ցուցանիշները միասնական քննությունների անցկացման վերջին հինգ տարիների ընթացքում պետք է առնվազն հավասար լինեն հանրապետական միջին ցուցանիշներին,

3) կազմակերպության վերջին հինգ տարիների ներքին և արտաքին գնահատման ցուցանիշները պետք է առնվազն հավասար լինեն հանրապետական միջին ցուցանիշին,

4) <<Գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից անցկացված ընթացիկ առարկայական ստուգարք-քննությունների արդյունքներով կազմակերպության սաների միջին գնահատականները պետք է վերջին հինգ տարիների ընթացքում առնվազն հավասար լինեն հանրապետական միջին ցուցանիշներին,

5) կազմակերպության մանկավարժական-մեթոդական նորարարական գործունեությունը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական գործընթացում արդյունավետորեն կիրառելու, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ հեղինակելու մասով) պետք է ճանաչված և արժևորված լինի կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին>> N 1334-Ն որոշմամբ հաստատված կարգի:

6. Անկախ սույն հավելվածի 5-րդ կետի պահանջներից, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք կարող է նվիրաբերվել նաև միջազգային բակալավրիատի դպրոցների համակարգում ընդգրկված կամ այդ համակարգում ընդգրկվելու գործընթացի 2-րդ փուլում գտնվող կազմակերպություններին:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է մերժել կամ թույլատրել նվիրաբերությամբ գույքի հանձնումը կազմակերպություններին՝ հաշվի առնելով նաև կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և առաջնահերթությունները: